

մատուցուցանել ի Ս. Գլխաղիր: Ժամարաքն էր Տ. Թեղորդու Արդ. Ջախարան:

Իրիկնադէտին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ եղան ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցած «Կառավարչի» Համոյեղին:

Կիր. 14 Յուն.- Կաղանդ, Նոր Տարի ըստ Հին Տոմարի: Մայր Տաճարի Աւագ Անդամն վրայ պատարագեց «Ժամօրինոյ» Տ. Վանիկ Վրդ. Մանկաւարեան: Հայր Մերձէն առաջ Տ. Անուշաւան Արդ. Ժամկոչեան կարգաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Աննայան Հայոց Կաթողիկոսին կոնդակը 1700 տմնակի առիւ: Ցետոյ բոլորը բարձրացան Պատրիարքարան երգելով Ս. Աթոռայ մաքեթերը: Ս. Բ. Վարժարանի անմերձ Յակոբ Մահակեան, գողորիկ ուղերձ մը արտասանեց, ուր կը խոյցէր Պատրիարք Սրբազան Հօր արեւշատարին:

Նորին Ամենապատուութիւնը ըրաւ իր պատշաճ իօսքը եւ քաճեց նարինը:

Ծ. 18 Յուն.- Ճրագալոյց Ս. Մննդեան: Առաւօտան ժամը 9.30ին ընդհանուր ռուսիկանապետը, Սրտապաշտի ռուսիկանապետը, եւ Հին Ֆաղաբի պատրաստանաւու ռուսիկաններ, Պատրիարք Սրբազանին այցելեցին Մնունդ շնորհաւորելու եւ ղէպի Բեթղեմէմ քափօրին հսկողութեան համար: Ժամը 10ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ծախքայ իսա ղէպի Բեթղեմէմ: Ժամբու կիսուն Յունաց Ս. Նդիա վանքին առջեւ դիմաւորելու եկած էին Պէյր-Մահտորի եւ Պէյր-Ճալայի Ֆաղապետները, Բեթղեմէմի փոխ ֆաղապետը եւ պետական մեքակայացոյցիներ:

Իսրայէլեան հինգ ռուսիկան ծիւղորներ ընկերացան Պատրիարք Սրբազանի ինքնաշարժին, առջեւն եւ իջեւն, մինչեւ Թաւէլի գետեզմանը, որմէ ետք Բափօրը Պաղեստինեան հինգ ծիւղորներով առաջնորդուցան ղէպի Բեթղեմէմ: Գաղաբի մուտքին, ինքնաշարժներն դուրս ելլելով, Պատրիարք Սրբազան եւ Միաբանութեան անդամները խալելով յառաջացան մինչեւ հրապարակ:

Բեթղեմէմի հրապարակին վրայ դիմաւորուելով Բեթղեմէմի կառավարիչէն, նախագահ Ծաղը Արափաբի մեքակայացոյցիչէն, ընդհանուր ռուսիկանապետն, Ֆաղապետն եւ պաշտօնատարներէն, նաեւ Հ.Ս.Միութեան եւ Հ.Մ.Բ.Միութեան սկստական խումբներն, լոբարեւոյց Մեծ շարակամի երգեցողութեամբ քափօրը բարձրացաւ Մննդեան Տաճարի Հայկական վանքը: Յետ միջոցի ժամը 2-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Հրաշափառով մուտք կատարուցաւ Ս. Մննդեան Տաճար եւ Ս.

Այր: Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատոյց Տ. Անուշաւան Արդ. Ժամկոչեան: Ապա՝ Միաբանութիւնը բարձրացան Հայոց Վանք: քակին մէջ կարդացուցաւ Ս. Մննդեան Անտարան եւ երգուցաւ «Փառք ի քարձուսն»:

Ուր. 19 Յուն.- Տոմ Մննդեան եւ Անտարան ծալալուցանեցան: Կեւ Գիշերին առաջ ժամը 10ին, Գիշերային պաշտամունքն յետոյ, Միաբանութիւնը կ'իջնէ Ս. Մննդեան այր ուր կը շարունակուի «Փառք ի քարձուսն» երգեցողութիւնը: Պաղեստինեան Կառավարութեան մեքակայացոյցիչները մեքակայ եղան, եւ աւարտին, Պատրիարք Սրբազան Հօր Մննդեան Հայերն եւ Անգլիկներն պատգամներն յետոյ մեքակեցան, շնորհատրելով Պատրիարք Սրբազան հայրը: Պաշտամունքները շարունակուցան Տաճարին մէջ: Պատրիարք Սրբազան եւ Լուսարարապետ Նուրեան Սրբազան վերադարձան Սրտապաշտ:

Արգ սեղանին վրայ պատարագեց Տ. Նորայր Արդ. Գագազեան: Ջրօրհնէքի արարողութեան հանդիսապետն էր Տ. Սեւան Սպա. Դարիպեան:

Ս. Մննդեան Այրին մէջ կը պատարագէ Տ. Սեւան Սպա. Դարիպեան: Պաշտամունքներու աւարտին, առաւօտեան ժամը 6.30ին, Միաբանութիւնը քափօրով եւ երգեցողութեամբ կը բարձրանայ Հայոց Վանք, եւ քակին մէջ կը կարդացուի Ս. Մննդեան Անտարանը եւ կ'երգուի «Փառք ի քարձուսն»: Միաբանութիւնը կը վերադառնայ Սրտապաշտ:

- Սրտապաշտի մէջ նրագալոյցի արարողութիւն կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գիշերականին վրայ կը պատարագէ Տ. Անունդ Արդ. Յովհաննիսեան: Նախատօնակին հանդիսապետն էր Տաճարին Տեսուչը՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Արարողութիւնները կ'աւարտին Տաճարին Տեսչարանին մէջ:

Առաւօտեան, Ս. Յարութեանց Մայր Տաճարի Աւագ Անդամին վրայ կը պատարագէ Տ. Անունդ Արդ. Յովհաննիսեան, Հրօրհնէքի արարողութեան կը հանդիսապետ Տ. Արիս Սպա. Տիւրկանեան:

Ծր. 20 Յուն.- Տիւրկանի Մեծիւց: Մայր Տաճարի Աւագ Անդամին վրայ պատարագեց Տ. Անուշաւան Արդ. Ժամկոչեան: Հոգեանգետեան կարգին հանդիսապետն Լուսարարապետ Տ. Նուրեան Արդ. Մանուկեան:

Կիր. 21 Յուն.- Ս. Պատարագը մատուցուցանելու Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Սպա. Դարիպեան: Ժամարաքն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Ծ. 25 Յուն.- Նախատօնակին ի Ս. Յակոբ մախարանեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 26 Յուն.- Տոմ Անունամարտութեան

Տնամն Առաւօտուն Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշա-
փառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տնարան:
Օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը Գրիգորի
Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ.
Արիս Եպս. Շիրվանեան:

Դէպի վանք դարձին հայոց քաղի մուտքէն
Միաբանութիւնը «Լոյս» ի Լուսոյ» շարականը
հրգելով բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը.
Պատրիարք Սրբազան Հայրը մախազահեց
«Տնօրենէի» արարողութեան, որ կրկնուեցաւ
վարդապետաց սեղանատան մէջ:

Նախատեսակին ի Ս. Յակոբ մախազահեց
Պատրիարք Սրբազան Հայրը:

Եր. 27 Յուն.- Տօն Մննդեան Ս.
Յովնանեան-Կարապետին Ս. Պատարագը
մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի
խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Համբարձում
Վրդ. Քէշիշեան:

Կիր. 28 Յուն.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ
խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանկի Վրդ.
Մանկասարեան:

Եր. 8 Փետր.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ Երուսաղէմի Հրեական քաժնին մէջ
գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:
Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:
Ժամարարն էր Տ. Բաբգոն Արք. Պուրնէճեան:
«Հայր Մերն» առաջ քարոզեց Տ. Սամուէլ Մ.
Վրդ. Աղոյեան:

Կիր. 4 Փետր.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, մեր վերնմատարան
մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:
Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արք.
Աթաշեան:

Ուր. 9 Փետր.- Նախատեսակին ի Ս.
Յակոբ մախազահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եր. 10 Փետր.- Ս. Աղաքէի Զօրավարին
Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս.
Սարգսի մատարան մէջ: Ժամարարն էր Տ. Իսահակ
Արք. Մինասեան:

Ըստ սովորութեան կատարուեցաւ
Հոգեհանգստեան պաշտօն, համգոյցեալ ազգային
բարեբար Գալուստ Պէյ Կիլիկեանեանի եւ ծնողաց՝
Սարգսի եւ Տիրուհւոյ եւ գերդաստանի մեքեղեցիոց
հոգեմերում համար մախազահութեամբ Պատրիարք
Սրբազան Հօր:

Կիր. 11 Փետր.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի
խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ընծանուէր
Արք. Բարախանեան:

Եր. 17 Փետր.- Արքայն Իսահակայ
Աղաքեի Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Գլխաւոր: Ժամարարն էր Տ.

Նեոնդ Արք. Յովնանեան:

Կիր. 18 Փետր.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, մեր վերնմատարան
մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:
Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Պարեո Մ. Վրդ.
Սրեցեան:

Դշ. 21 Փետր.- Նախատեսակին ի Ս.
Յակոբ մախազահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ոշ. 22 Փետր.- Ս. Վարդանան
Զօրավարացն Մերոց 1088 վկայիցն (Յիշատակ
Մեռելոց եւ Տօն Ազգային):

- Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ
պատարագեց եւ քարոզեց Ժառանգաւորաց
վարժարանի Տնաւ Տ. Պարեո Մ. Վրդ. Սրեցեան:
Պատրիարք Սրբազան Հայրը մախազահեց
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց
Կաթողիկոսի անուան տօնին առիթ կատարուած
«Հայրապետական Մարդման»ին:

Ուր. 28 Փետր.- Ըստ սովորութեան Ս.
Պատարագը մատուցուեցաւ Ասրուց Ս. Մարկոս
Աւետարանիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր
Տ. Արիս Եպս. Շիրվանեան որ ման Քարոզեց:
Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:
Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ասրուց կողմէն:

Եր. 24 Փետր.- Ս. Պապոյ Ս. Ժողովոյն
Հաբիւր-Տիւնն Հայրապետացն: Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Գլխաւոր: Ժամարարն էր Տ.
Կոմիտաս Վրդ. Շերպէճեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ
խորանը, սեղաններու ու գլխաւոր սրբանկարները,
Համբարձի շարականը հրգումս ժամանակ
վարագուրուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր,
Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռնով:

Կիր. 25 Փետր.- Բուն Բարեկեցական
Փակեալ Խորանին Ս. Պատարագը Մայր Տաճարի
Աւագ Սեղանին վրայ մատոյց Տ. Բարսեղ Վրդ.
Գալիւտեան: Դարապետի պաշտօնը վարեց
Պարեո Մ. Վրդ. Սրեցեան: «Հայր Մերն» առաջ
քարոզեց Տ. Վանկի Վրդ. Մանկասարեան:

Բշ. 26 Փետր.- Տնաւնդն առաջի
մեծահանդէս մախազահեց պաշտուեցաւ ի Ս.
Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաւատան» եւ
մումվաւտութիւն: Նախազահեց Պատրիարք
Սրբազան Հայրը:

Գրչեալակցիքին Մայր Տաճարին մէջ
կատարուեցաւ «Եկեղեցւոյ» հսկման կարգը:
Նախազահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Դշ. 27 Փետր.- Տնաւնդն առաջի: Ս.
Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ
մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Դշ. 28 Փետր.- Սկիզբն կարգաց Մեծի
Պահոց: Առաւօտեան Մայր Տաճարին մէջ տեղի
ունեցաւ «Արեւագալ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք
«Դաւաղական»ի առաջին ժամերգութիւնը:

ՊԱՏԵՏՈՆԱԿԱՆՐԻ

Եր. 30 Դեկտեմբեր.- Սրբոց Թարգ մանցաց վարժարանի սաների հաճոյք պատճառեցին Սաղիմահայտեան, իրենց մերկայացուցած սոսակակ հանդէտով որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 30ին ժառանգաւորաց վարժարանի մէծ արահին մէջ երեկոյեան ժամը 7:30ին:

Կազմողի տոնական հանդէսին կը մասնագանէր Պատրիարք Սրբազան Հայրը մերկայութեամբ Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ ժողովուրդին: Մէկժամեայ հանդէս յայտագիրը լեցուն էր աշակերտներուն իմաստային արտայայտութիւններով, օգտագործելով Աստուծէ իրենց տրուած շնորհները: Հայախօս մանուկի կողմէն բեմին վրայ կանգնած էին տասնեակ մը մանուկներ, որոնց միայն հայրը կամ մայրը հայ է: Անոնք հայերէն կ'արտայայտուէին զարմացնելով իրենց իսկ արար ծնողներն ու մերկաները, նոր շունչ բերելով երրորդ հազարամեակ մտնող Հայ Հոգիին:

Յայտագիրը պատրաստած էր վարժարանի Մշակութայինի պատասխանատու Տօք. Անուշ Նազգաշեան Տեսուչ Ս. Թեոդորոս Արդ. Զաքարեանի եւ Ս. Ընծանուէր Արդ. Բարսիսանեանի աջակցութեամբ:

Կ'արժէ ինչ յիշատակել այն քարի դիտումը, որով Ս. Թարգմանց վերջին դասարանի սաները իրենց փոքրիկ մուտքը կը բերէին դպրոցին՝ վաճառի դնելով իւրաքանչիւր իր պատրաստած անուշեղները:

Յայտագրի վերջում, Պատրիարք Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ գնահատում էր գոհունակութիւն արտայայտեց կատարածի համար, գովեց գեղեցիկ գաղափարը Նաղաղութիւն պատասխին բեմի վրայ ցուցադրելուն: «Աս է միայն որ կը ցանկանմ մեր շրջապատի ժողովուրդներուն եւ Հայ աշխարհին: ... Թէն շատ դժուարութիւններու մէջ է Հայաստան աշխարհը, բայց այդ օրերն ալ կ'անցնին. սեւ ամպեր են, կու գան ու կ'երթան»:

Բշ. 1 Յունուար.- Երուսաղէմի Լատին Պատրիարքի երաւերին ընդառաջելով՝ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի, մերկայ գտնուեցաւ Պատրիարքարանի տաճարին մէջ Վատիկանէն ժամանած Քարտիկոս Իոսէօր Էքզաքարայի մատուցած Ս. Պատարագին, ժամը 10:30ին:

Եր. 13 Յունուար.- Ս. Մննդեան տոնական հանդիսութեանց սեմին, ընդունուած սովորութեան համաձայն, ժառանգաւորաց վարժարանի սաները հանդէս եկան Կաղանդի յայտագրով Շարաք, Յունուար 13ին, ժառանգաւորաց Մեծ արահին մէջ, երեկոյեան ժամը 7 ին:

Վարժարանի «Սիրտ ի սիրտ» խալիբը խմբերգին համընթաց մերս մտաւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը զլիաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, ուր արդէն հասաւուած էին զոյգ վարժարաններու ուսուցչական կազմն ու Պատրիարքարանի պաշտօնէութիւնը:

Հայաստանի հիմնէն ամմիջապէս խորը, Բացման խօսքն ըրաւ ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ՝ Ս. Պարտ Ծ. Վրդ. Երեցեան՝ քարիզալուստի եւ Նոր Տարուայ շնորհաւորական խօսքի ուղղելով մերկաներուն: Տեսուչ Հայրսուրբը մասնաւորաբար յիշեց ժառանգաւոր սաներուն Պատրիարք Սրբազան Հօր նկատմամբ տածած ակնածանքն ու երախտագիտութիւնը, որով կը վայելէին Ս. Աթոռոյս քարիկները: Ժառանգաւոր սաներու Մննդեան խմբական երգերը շատ յաջող էին ղեկավարութեամբ Պր. Վալերի Փիրումեանի: Յայտագրին մաս կը կազմէին նաեւ երեք ժառանգաւորներու՝ Աւետիք Ալեքեանի, Յովհաննէս Գեորգեանի, Պաւլ Դարեանի դաշնակի վրայ կատարած համարները: Երգերու ու երաժշտութեան շարանն լրացնելու եկաւ Ս. Անուշաւան Արդ. Ժամկոյեան (Ս. Աթոռոյս հիւրն էր Ս. Մննդեան Տօներուն Գերմանիոյ Հալլէ համալսարանէն)՝ «Panis Angelicus» լիներգի համարով, որով դահլիճը լեցուն ծափահարութեամբ: Մինչ Հայրսուրբը Սրբազան Հօր Աջը կ'առնէր, արահի բեմին գաղափարներն ու յարգարանքը նոր քան մը կը մասխախտէր: Մշակութայինի պատասխանատու Ս. Ընծանուէր Արդ. Բարսիսանեանի ջանքերով Կաղանդի բեմադրութիւնը խանդավառ մթնոլորտ ստեղծեց: Ժառանգաւոր սաներ կը մերկայացնէին «Քարի Գայլուկին, Ձար Աւագակներուն եւ Կաղանդ Պապային Արկածները» վերնագիրով քատերախաղը, ուր կը փայլէին Հայաստանէն նոր եկած ժառանգաւոր սաներու նորանոր թափուած շնորհներն ու մախափրութիւնները՝ իրենց առ իք ընծայուած նման յայտագրով մը: Պատրիարք Սրբազան Հօր Նոր Տարուան մարաբմբներէն եւ «Տերունական Աղօթքէն» յետոյ, ամենքը մեկնեցան, կէս գիշերին վաճիք Մեծ Բակին մէջ Նոր Տարին դիմաւորելու համար:

Տօնական ընթրիք տրուեցաւ Պատրիարքարանի արահներէն մէկուն մէջ, ուր ներկայ էին Պատրիարք Սրբազան Հայրն ու Միաբանութեան անդամները: Ժառանգաւորաց վարժարանի սաներն ալ ունեցան իրենց խորանմալք մինչ կտագիշեր: Կտագիշերային զանգակահարութիւնն կ'աւետէր Աւանդական Նոր Տարուայ մուտքը՝ ղէպի վաճիք Մեծ Բակ շտապեցնելով բազմութիւնը: Զանգերուն ղողանքին համընթաց ժառանգաւորաց սաները կ'երգէին Մննդեան շարականներ:

«Փառք ի քարճուսն» երգի լուսնն ետք,
Միաբանութեան մերկայ անդամներն Տ. Ասետի
Արդ. Իփրանեան տը Տարույ պատգամով խաղաղու-
թեան, ապահովութեան եւ բարգաւաճութեան
մարտնչներ ուղղեց ժողովուրդին: Սրիտասարդ-
ներուն կողմէ Մեծ Բակէն մերս պատրաստուած
հրավառութիւնով մերկաները վերադարձան իրենց
ընտանեակն յարկին տակ շարունակելու տը
Տարին:

Եր. 20 Յունուար.— Այս տարի բացառա-
բար, Քափօրով շնորհատրական այցելութիւններ
եւ հիւրընկալութիւններ չեղան պատմական
եկեղեցիներու միջեւ, ի յարգանս Յունաց
մարտպախման Ամեն. Տ. Տիոտորոս Սրբազան
Պատրիարքին:

Դշ. 24 Յունուար.— Յունուար 21-28,
Աղօթքի Շարաք Քրիստոնէական Միութեան:
Հիմնական նպատակն էր աղօթքի հոգեով եւ այժով
Քրիստոսի խաղաղութեան հաստատումը աշխարհի
մէջ, յատկապէս Ս.Նրկլիին: Ուրբ տարբեր
յարանուամութեանց եկեղեցիներու մէջ տեղի
ունեցաւ յատուկ կրօնական պաշտամունք:

Զորեմշաքի, Յունուար 24ին արարողու-
թիւնը տեղի ունեցաւ Ս. Յակոբայ Մայր Տաճարէն
մերս, կ. ե. ժամը 5ին, ուր հաւաքուած էին տարա-
յարանուամութեանց եկեղեցիական եւ աշխարհական
մերկայացուցիչներ: Ժամերգութեանը կը նախա-
գահէր էֆիմէնիէ յարաբնութեանց պատասխա-
նատու Տ. Արիս Նպս. Շիրվանեան: «Քրիստոս ի
մէջ» ողորդիմ երգեցողութենէն առաջ, Արիս
Սրբազան օրուայ պատգամը փոխանցեց
մերկաներուն, յիշատակելով մահւ 1700ամեակի
տարեդարձը Հայ ժողովուրդի Քրիստոնէական
հաւատքի պետականացման եւ տարածման:
Մէկժամեայ յայտագիրը փակուեցաւ Տերմական
աղօթով, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն
Ժառանգաւորաց Վարժարանի փոքր սրահին մէջ:

Բշ. 29 Յունուար.— Կեսօրէ ետք ժամը
4:30 ին Սրուսաղէմի Փոքրիփիգալ Միշընի
Տեսուչ՝ Հայր Կիտո, ընկերակցութեամբ Նիւ
Նորէն ժամանած Հայր Տենիսին, տեսակցութիւն
ունեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

8-24 Յունուար.— Ս. Մննդեան Տօներու
առիթով Ս. Աթոռոյս հիւրն էր էջմիածնի
Միաբան Նոզէ. Տ. Անուշաւան Արդ. Ժամկոչեան,
որ իր առաջին ուխտը կ'ընէր դէպի Սրուսաղէմ,
երկու շաբաթ արձակուրդով, Գերմանիոյ Լա Հայը
Համալսարանէն, ուր ուսանող է:

Ուր. 2 Փետրուար.— Պաշտօնական
այցով Իսրայել կը գտնուէր Նիւ Նորէ Ժողովին

Խորհուրդի Խօսնակը՝ Փիթր Վալոնէ, որ վաղեմի
քարեկամն էր Պատրիարք Սրբազան Հօր, երբ
Սրբազանը Առաջնորդ էր Հիւսիսային Ամերիկայի
Արեւելեան բնակիւն: Փիթր Վալոնէն եւ անոր
ընկերակցող անձինք այցելեցին Պատրիարք
Սրբազան Հօր, եղան Վալմիս որոշ հաստատութիւն-
ներէն մերս առաջնորդութեամբ Բագրատ Արդ.
Պուրճէֆեանին եւ Իսահակ Արդ. Միմասեանին, եւ
հաշին սեղանակից եղան:

Դշ. 14 Փետրուար.— Նրուսաղէմի մէջ
Ֆրանսական դեսպան Տէմիս Փիթօնի, ի պատիւ
Միջին Արեւելի Սկզբեցիներու Խորհուրդի
Նրուսաղէմի գրասենեակի վարիչ Հրաջ Յաղոբեանի
կազմակերպած հաշկերոյթին հրաւիրուած էին
Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ
Արիս Նպս. Շիրվանեանի:

Գշ. 2 Փետրուար.— Պատրիարքարան
այցելեցին Սրբայական Համալսարանի մի շարք
քրօֆեսորներ, մասնագետներ եւ հնագէտներ: Տ.
Բագրատ Արդ. Պուրճէֆեան եւ Տ. Իսահակ Արդ.
Միմասեան, քաջատրութիւններ տուին հաստատու-
թիւններու մասին: Պատրիարք Սրբազան Հօր հետ
անունց հանդիպումը ետաւաքրական էր այն
իմաստով որ անոնք փոխանցեցին իրենց
տպաւորութիւնները:

Գշ. 22 Փետրուար.— Սրբոց Վարդանանց
Տօնին առիթով ամէն տարուայ պէս համդէս եկաւ
Ժառանգաւորաց Վարժարանն իր պատրաստած
«Վարդանանք» յայտագիրով: Խմբական երգերու
եւ բանաստեղծութիւններու շարքին կարդացուեցան
մահւ անձնական շարադրանքներ: Վարդանանցին
նուիրուած բանաստեղծիւնը կարդաց Տօքթ.
Գեորգ Բաղդիշեան: Վարդանանց հանդէսը կը
վարէր Ժառանգաւորաց Վարժարանի փոխտեսուչ՝
Տ. Նորայր Արդ. Գազազեան: Մէկ ժամէ աւելի
տեւող յայտագիրը աւարտեցաւ Պատրիարք
Սրբազան Հօր փակման խօսքով:

Ուր. 23 Փետրուար.— Ներայական
Համալսարանի նախագահ Միմասեան Մակիտօր,
ՀՀ Պատույ Հիւպատոս Յուլիկ Մանեան եւ Բրօֆ.
Մայքլ Սթօն՝ իրենց կողակիցներով, տեսակցութիւն
ունեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հիւրերուն
այցի նպատակն էր ծանօթանալ Հայ Մշակույթի այն
բացառիկ գործերուն, որոնք կը գտնուին Հայոց
Պատրիարքարանի եռվանդան մերձք: Կեսօրէ ետք
Ժամը 4ին, Պատրիարք Սրբազան Հօր հետ
տեսակցութենէն յետոյ, հիւրերն եղան Վանուց
մի շարք հաստատութիւններէն մերս, առաջ-
նորդութեամբ Տ. Իսահակ Արդ. Միմասեանի: